ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 27. ՊԱՅՔԱՐԸ ՄԵՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1

Հայաստանը, ըստ Ք.ծ.ա. 66 թ. Տիգրան Մեծի և Պոմպեոս զորավարի միջև կնքված Արտաշատի պայմանագրի, Հռոմի դաշնակից և բարեկամ պետություն էր:

Սիրիայում Կրասոսը մեծ բանակ հավաքեց: Հայոց արքա Արտավազդ II-ից՝ որպես Հռոմի դաշնակցից և բարեկամից, օգնական զորք պահանջեց: Սակայն պարթևներն իրենք նախահարձակ եղան Հայաստանի վրա, և Արտավազդ II-ը գերադասեց Կրասոսին օգնելու փոխարեն պաշտպանել սեփական հայրենիքը և պարթևների հետ դաշինք կնքեց:

Կրասոսը որոշեց նախ՝ հաղթել պարթևներին, ապա պատժել «դավաճան» հայոց արքային: Իր բանակով նա ներխուժեց Պարթևստան: Ք.ծ.ա. 53 թ. Խառանի ճակատամարտում պարթևները ջախջախեցին հռոմեական բանակը, Կրասոսը սպանվեց:

Հայաստանի և Պարթևստանի արքաները Արտաշատում տոնում էին պարթև գահաժառանգ Բակուրի և հայոց արքայադստեր՝ Արտավազդ II-ի քրոջ հարսանիքը՝ ի նշան իրենց դաշինքի: Հարսանիքի մասնակիցները դիտում էին Էվրիպիդեսի ***«Բաքոսուհիներ»*** ողբերգությունը, երբ ներս բերեցին Կրասոս զորավարի գլուխը:

2

Դավադիրների թվում էր և Գայոս Բրուտոսը, որին Կեսարը սիրում էր հարազատ որդու պես: Երբ նա նույնպես դաշույնով հարվածեց Կեսարին, վերջինս բացականչեց՝ ***«Եվ դո՛ւ, Բրուտո՛ս»***: Այս թևավոր դարձած խոսքը նշանակում է՝ մտերիմ մարդու կողմից չսպասված դավաճանություն: